ԿԱՐԾԻՔ

Էլինա Կարենի Գեղամյանի «Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» վերտառությամբ, ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Վարչարարության բողոքարկման ինստիտուտը ժամանակակից վարչական իրավունքում ամենախնդրահարույց, վարչական իրավունքի ողջ համակարգի գործունեության արդյունավետությունն ուղղակի պայմանավորող և պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի կենսագործումն ապահովող կարևորագույն ինստիտուտ է: Վարչարարության բողոքարկման ինստիտուտի իրավական համապարփակ հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես այս ինստիտուտի՝ վարչական իրավունքի համակարգում ունեցած ծանրակշիռ դերով, այնպես էլ հանրային իշխանություն-քաղաքացի հարաբերություններում խախտված իրավունքների վերականգնումն ապահովելու տեսանկյունից դրա ունեցած անժխտելի նշանակությամբ:

Հեղինակին հաջողվել է անհրաժեշտ փաստարկներով հիմնավորել թեմայի արդիականությունը և հետազոտության կառուցվածքն ընտրել այնպես, որ հնարավորինս հասցեական ու ամբողջական ընդգրկի քննարկվող ինստիտուտի առնչությամբ առավել արդիական և լայնածավալ հետազոտություն պահանջող հիմնահարցերը՝ փորձելով դրանց համարժեք լուծումներ տալ: Հեղինակի կողմից հետազոտության համար ընտրված առանձին հիմնահարցեր, ինչպիսիք են, օրինակ, բողոքարկվող վարչարարության վերանայման սահմանները, վարչական կարգով բողոքարկման թույլատրելիության, վարչական բողոքարկման համակարգի արդյունավետության, վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի իրավական բնույթի հարցերը, ոչ միայն խիստ արդիական են, այլև գիտական ուսումնասիրության տեսանկյունից հրատապ՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում այս հարցերի առնչությամբ առկա համակարգային խնդիրները:

Հեղինակը հիմնավոր կերպով ընդգծել է, որ վարչարարության բողոքարկման ինստիտուտը դատական պաշտպանության, իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու և պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքների վրա խարսխված, հանրային իշխանություն – քաղաքացի հարաբերություններում խախտված իրավունքների պաշտպանությանն ու վերականգնմանն առաջնահերթ միտված ինստիտուտ է, ինչպիսի պայմաններում ինչպես օրենսդրական մակարդակում այս իրավունքի ոչ համարժեք սահմանափակումները, այնպես էլ դրա գործնականում արդյունավետ իրացման խոչընդոտներն անհամատեղելի կլինեն վերոնշյալ հիմնարար իրավունքների պաշտպանության և, ընդհանուր առմամբ, ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում բողոքարկման ինստիտուտի էության և նպատակների հետ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանված են ութ պարագրաֆի, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածից: Հեղինակի կողմից ընտրվել է ատենախոսության համարժեք, հետազոտության ներքին ամբողջականությունն ապահովող, տրամաբանական, նաև համարձակ կառուցվածք՝ ընդգրկելով ուսումնասիրվող թեմայի շրջանակում հիմնարար նշանակություն ունեցող լայն շրջանակի հարցադրումներ:

Ատենախոսության շրջանակում առաջադրված և որպես գիտական նորույթ առանձնացված դրույթներից **առանձնապես արժեքավոր ենք համարում հետևյալները.**

1. Հեղինակն առաջարկել է վարչարարության բողոքարկման սուբյեկտների շահագրգռվածության որոշման նոր՝ գիտական նորույթ հանդիսացող և գիտագործնական կարևոր նշանակություն ունեցող եռաստիճան չափանիշ՝ նշելով, որ «իրավական շահագրգռվածությունը» կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ բողոքարկվող վարչարարությունն անձի իրավական վիճակի վրա ունեցել է **իրական, կոնկրետ և նշանակալի միջամտող ազդեցություն,** կամ առկա է այդպիսի միջամտող ազդեցության հավանականություն: Հեղինակի այս առաջարկը բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշման «ավանդական» երկու՝ շահագրգռվածության և իրավունքի վրա հիմնված հայեցակարգերի՝ գիտականորեն հիմնավորված ու արդարացված միավորում է, որը հնարավորություն կարող է տալ անհրաժեշտ հավասարակշռություն ապահովել գերմանական իրավունքից ծագող՝ իրավունքի վրա

հիմնված, և ֆրանսիական իրավունքից ծագող՝ շահագրգռվածության վրա հիմնված հայեցակարգերի միջև և առավել հասցեական ապահովել վարչարարությունից իրական ազդեցություն կրող անձանց բողոքարկման իրավունքի իրացումը:

2. Հեղինակն անդրադարձել է հայրենական վարչական իրավունքի գիտությունում ու պրակտիկայում հրատապ հետազոտություն ու լուծում պահանջող՝ **վարչարարության վարչական կարգող բողոքարկման պարտադիրության խնդրին**: Այս խնդրի հետազոտությունը պարզապես պարտադիրության դեմ և օգտին փաստարկներով սահմանափակելու փոխարեն Հեղինակը հիմնարար ու սկզբունքային հետազոտություն է իրականացրել վարչարարության վարչական բողոքարկման արդյունավետության առնչությամբ, կատարել նաև էմպիրիկ հետազոտություն՝ Հայաստանի Հանրապետության վարչական մարմինների ճնշող մեծամասնության՝ վերջին հինգ տարիների իրավակիրառ պրակտիկայի առնչությամբ: Վարչական բողոքարկման արդյունավետության առնչությամբ գիտագործնական կարևոր նշանակություն ունեցող նոր չափանիշներ առաջադրելու արդյունքում Հեղինակն ընդգծել է, որ նշված չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում միայն կարող է լիարժեք ներդրվել վարչական բողոքարկման պարտադիրության հայեցակարգը: Հակառակ պարագայում վարչական բողոքարկման պարտադիրությունը ոչ միայն չի բարձրացնում վարչարարության արդյունքում խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, այլև վերածվում է դատարանի մատչելիության իրավունքի արհեստական խոչընդոտի: Հեղինակի այս մոտեցումը, կարծում ենք, նոր բովանդակություն է հաղորդում նաև բողոքարկման պարտադիրության հիմնահարցին՝ ապահովելով գիտական նորույթի համար անհրաժեշտ խորությունը, հիմնավորվածությունը և ինքնատիպությունը:

3. Վարչարարության բողոքարկման՝ բողոքարկվող վարչական ակտի կատարման վրա ազդեցության հիմնահարցը ևս ժամանակակից վարչարարության իրավունքում ծանրակշիռ դեր ունեցող և գիտագործնական մակարդակում հրատապ լուծում պահանջող հարցերից է: Առանձնահատուկ ցանկանում ենք ընդգծել, որ Հեղինակն այս ինստիտուտն ուսումնասիրելիս չի ընտրել միայն դրա առնչությամբ առկա առանձին խնդիրների հաղթահարման ուղղություններ առաջարկելու ճանապարհը: Հեղինակը փոխարենն ընտրել է այս ինստիտուտի իրավական բնույթի բացահայտման, վարչական ակտի կատարման կասեցում եզրույթի գիտագործնական մեկնաբանության հստակ

չափանիշների սահմանման, ապա նոր միայն՝ վարչական ակտի կատարման կասեցման համատեքստում շահագրգիռ անձանց իրավունքների համապարփակ պաշտպանության գործիքակազմերի քննարկման ու առաջադրման ճանապարհը: Արդյունքում Հեղինակին հաջողվել է առանձնացնել քննարկման ինստիտուտի առնչությամբ գիտական նորույթ հանդիսացող և այս ինստիտուտի թե՛ գիտական անհրաժեշտ հիմքերն ապահովող եզրահանգումներ, որոնք կարևոր ուղենիշային նշանակություն կարող են ունենալ այդ ինստիտուտի առնչությամբ հետագա օրենսդրական զարգացումների և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման համար:

Գիտական նորույթի տեսանկյունից ուշագրավ և արժեքավոր են նաև վարչական դատավարությունում խմբային հայցի ներդրման, ինչպես նաև բարենպաստ վարչական ակտերը պատճառաբանական մասով բողոքարկելու հնարավորության վերաբերյալ Հեղինակի կողմից առաջադրվող եզրահանգումները:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Հեղինակը բավարար խորությամբ չի անդրադարձել վարչական բողոքարկման պարտադիրության հայեցակարգի ուսումնասիրությանը:

Մեր կարծիքով՝ նախքան դատարան դիմելը վարչական բողոքարկման պարտադիր պահանջ սահմանելու անհրաժեշտությունը բխում է ոչ միայն դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու՝ թեև տեխնիկական, սակայն այսօր մեր երկրում օրհասական կարևորություն ունեցող հրամայականից, այլ նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքից:

Բանն այն է, որ վարչական արդարադատության միջոցով գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառույթը կարող է պատշաճ իրականացվել միայն այն դեպքում, եթե գործադիր իշխանությունը վերջնական որոշում է կայացրել տվյալ հարցի վերաբերյալ: Իսկ քննարկվող հարցի վերաբերյալ գործադիր իշխանության վերջնական որոշումը կարող է հայտնի լինել միայն վարչական բողոքարկման պարագայում: Վարչական բողոքարկումն է այն արդյունավետ միջոցը, որով գործադիր իշխանությունը շտկում է իր իսկ սխալները, վերականգնում է վարչարարության գործընթացի և արդյունքների իրավաչափությունը, պաշտպանում

մարդու իրավունքները և ազատությունները ոչ իրավաչափ միջամտությունից: Ուստի կարծում ենք, որ վարչարարության դատական բողոքարկումը պետք է հնարավոր համարվի միայն այն դեպքում, եթե այդ վարչարարությունը արդեն իսկ բողոքարկվել է վարչական կարգով և այդ բողոքարկման արդյունքում գործադիր իշխանությունը տվել է իր վերջնական դիրքորոշումը խնդրո առարկա հարցի կապակցությամբ:

Հետևաբար, սույն ատենախոսությունը կշահեր, եթե Հեղինակը վարչական բողոքարկման պարտադիրության հայեցակարգին անդրադառնար նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի պարադիգմայից և շարադրեր իր մոտեցումներն ու առաջարկությունները վերոգրյալ գաղափարների տեսանկյունից:

2. Հեղինակը բավարար խորությամբ չի անդրադարձել վարչական բողոքարկման ինստիտուցիոնալ կառուցակարգերի կատարելագործման հիմնախնդրին:

Գտնում ենք, որ վարչական բողոքարկման ընթացակարգերի լավարկումը չի կարող տալ անհրաժեշտ արդյունքը, եթե գործադիր իշխանության ներսում առկա չլինի այդ ընթացակարգերը կյանքի կոչող ինստիտուցիոնալ համակարգ: Այս առումով կարող է կիրառելի լինել առանձին ոլորտներում (օրինակ՝ ճանապարհային երթևեկություն, քաղաքաշինություն) վարչական բողոքները քննող կոլեգիալ մարմինների ստեղծումը:

Հետևաբար, սույն ատենախոսությունը կշահեր, եթե Հեղինակը անդրադառնար նաև վարչական բողոքները քննող մարմինների համակարգի զարգացման հեռանկարներին՝ առաջարկելով հստակ չափանիշներ և մոտեցումներ գործող մարմինների վերափոխման, ինչպես նաև վարչական բողոքը քննող նոր մարմինների ստեղծման վերաբերյալ:

3. Հեղինակը, պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթում առաջարկել է վարչական բողոքարկման արդյունավետության գնահատման նոր մոդել, որի պայմաններից մեկը, ըստ Հեղինակի, վարչական բողոքի քննության ընթացակարգային անհրաժեշտ երաշխիքների առկայությունն է:

Անառարկելի է, որ վարչական բողոքարկման ընթացակարգերի բարելավումը կարևոր նշանակություն ունի այս իրավաբանական ինստիտուտի արդյունավետ կենսագործման համար: Ուստի գտնում ենք, որ սույն ատենախոսությունը կշահեր, եթե Հեղինակը բացահայտեր վարչական բողոքի քննության արդյունավետությունն

ապահովելու համար անհրաժեշտ ընթացակարգային երաշխիքների բովանդակությունը և այս առնչությամբ ներկայացներ իր սեփական մոտեցումները և առաջարկությունները:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ մեր նկատառումները՝ գտնում ենք, որ Էլինա Կարենի Գեղամյանի ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, գիտականորեն հիմնավորված և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն, որը նշանակալիորեն լրացնում է հայրենական վարչական իրավունքի գիտությունում առկա բացը: Վերը ներկայացված նկատառումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը, դրանք առավելապես ուղղված են ընդգծելու այն հարցերը, որոնց պատասխանները կցանկանայինք տեսնել ատենախոսությունում և հեղինակի հետագա հետազոտություններում, և որոնց վերաբերյալ նպատակահարմար կլիներ Հեղինակի պարզաբանումները լսել պաշտպանության ընթացքում:

Հեղինակի կողմից առանձնացված գիտական դրույթներն ու եզրակացություններն ունեն գիտական նորույթի չափանիշներին բավարարող անհրաժեշտ խորություն, ինքնուրույնություն, ինքնատիպություն, հիմնավորված են աշխատանքում, և կարող են ոչ միայն վարչական իրավունքի գիտությունում հետագա հետազոտությունների մեթոդաբանական անհրաժեշտ հիմք հանդիսանալ, այլև էական նշանակություն ունենալ օրենսդրության հետագա բարելավումների և իրավակիրառ պրակտիկայում առկա մի շարք խնդիրների հաղթահարման տեսանկյունից: Ատենախոսությունն առանձնանում է գիտական անհրաժեշտ խորությամբ, Հեղինակի կողմից ուսումնասիրվող հիմնահարցերին և իր իսկ կողմից առաջարկվող լուծումներին ցուցաբերվող քննադատական և բազմակողմանի մոտեցմամբ, ինչը ևս ատենախոսության՝ առանձնահատուկ շեշտադրման ենթակա առավելություն է:

Ատենախոսության հիմնական դրույթները անհրաժեշտ ծավալով և խորությամբ արտացոլված են հեղինակի թվով 7 գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում:

Այսպիսով, Էլինա Կարենի Գեղամյանի «Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

հայցելու ատենախոսությունը համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, այդ թվում՝ 6-8-րդ կետերի պահանջներին, ուստի հեղինակին՝ Էլինա Կարենի Գեղամյանին, կարող է շնորհվել ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

«26» հունիսի 2026 թվական

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ Կարեն Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«26» հունիսի 2026 թվական